«Проблемы воспроизводства в условиях научно-технического прогресса», изд-во АН АрмССР, Ереван, 1985, 302 с.

«Վերարտադրության պրոբլեմները գիտատեխնիկական առաջընթացի պայմաններում», ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1985, 302 էջ։

Արդի տնտեսական պրոցեսները տեսակետ միտքը գրաղեցնում են նոր որոնումներով։ Դա դասականալի է. ՍՍՀՄ տնտեսական ու սոցիալական ժամանակակից ու հեռանկարային զարգացումը, գիտատեխնիկական առաջընթացը պարտադրում են հասարակական վերարտադրության բարդ համակարգում հայտնաբերել նոր կապեր ու ներգործություններ, առարկայի քննությունը բարձրացնելով հետազոտական նոր աստիճանի, արտադրության ինտենսիվացման պրոբլեմները դիտարկել նոր չափանիշներով։ Այդ պրոբլեմների գիտական լուսաբանությունն է գրախոսվող աշխատությունը, որը նվիրված է ակադեմիկոս Ա. Ա. Առաքելյանի ծննդյան 75-ամյակին։

Աշխատության սկզբում ուրվագծվում է վաստակաշատ գիտնականի գիտական ու հասարակական գործունեության վերընթաց ուղին։ Այնուհետև Ա. Առաքելյանը հանդես է գալիս գիտատեխնիկական առաջընթացի՝ որպես վերարտադրության ինտենսիվացման հիմքի, ընդարձակ հետազոտությամբ, որում խոշորագույն քննության է ենթարկվում ՍՍՀՄ-ում վերարտադրության ինտենսիվացման հնարավորության ու անհրաժեշտության, նոր տեխնիկայի հիման վրա աշխատանքի արդյունավետության բարձրացման, գիտատեխնիկական առաջընթացի պլանային դեկավարման կատարելագործման պրոբլեմները։

Արտադրության ինտենսիվացման պրոցեսը արտադրողական ուժերի ու արտադրական հարաբերությունների «բարդ դիալեկտիկական պրոցես» է։ Եվ ինքնին հարց է առաջանում, թե տնտեսական հարաբերությունների ինչ տարածքում պիտի քննարկվի էկոնոմիկայի ինտենսիվ զարգացման անհրաժեշտության հարցը։ Տնտեսագիտական գրականության մեջ առաջադրված են տեսակետներ, գիտական ուրույն մոտեցումներ, որոնք տնտեսության ինտենսիվացման հարցում գերագնահատելով այս կամ այն գործոնի դերը, հանգում են նկատելի ծայրահեղություններ։ Անշուշտ վրիպում են այն տնտեսագետները, իրավացիորեն եզրակացնում է Ա. Առաքելյանը, ովքեր էկոնոմիկայի ինտենսիվ զարգացման անհրաժեշտությունը կապում են ոչ թե սոցիալիզմի ժամանակակից փուլի տնտեսական օրենքների ամբողջ համակարգի, այլ «ժամանակավոր կոնյուկտուրային գործոնների» կամ էլ «տնտեսական շրջանառության մեջ լրացուցիչ արտադրական ռեսուրսների ներգրավման հնարավորությունների սահմանափակության հետ» (էջ 16)։ Հայտնի է, որ ինտենսիվացման աստիճանը վերարտադրության տարբեր փուլերում տարբեր է, որը որոշակի դժվարություններ է առաջացնում վերարտադրության պրոցեսների՝ իբրև միասնական ամբողջության, համաձայնեցված գործնական իրականացման համար։ Այստեղից էլ գիտնականի այն խիստ արդիական պահանջը, որ տնտեսվարության բոլոր մակարդակներում անհրաժեշտ է գիտատեխնիկական առաջընթացի միասնական ու համաչափ իրականացում։ Այս առումով հեղինակը տալիս է հասարակական արտադրության արդյունավետության բարձրացման տեսական հիմնավորումը։ Վերջին հաշվով արտադրության արդյունավետության բարձրացումը ենթադրում է ինչպես կենդանի, այնպես էլ առարկայացված աշխատանքի արտադրողականության բարձրացում, որը կախված է բազմաթիվ գործոններից։ Վերջիններիս մեջ իր առանձնահատուկ տեղն ունի տեխնիկայի նորացման գործոնը։ Արտադրողական ուժերի զարգացման պրոցեսը անընդմեջ պրոցես է, սակայն տնտեսական հասունության յուրաքանչյուր փուլ ունի արտադրության միջոցների զարգացման իր առանձնահատկությունը։ Ա. Առաքելյանն այն միտքն է զարգացնում, որ արդի փուլում «տեխնիկական առաջընթաց» հասկացությունը ձեռք է բերել որակական նոր գծեր և եթե մինչ այժմ տեխնիկական առաջընթացը տեղի էր ունենում «լայնությամբ», ապա այժմ արդեն խոսքը գնում է «գոյություն ունեցող տեխնիկան սկզբունքորեն նորով փոխարինելու» (էջ 29) մասին։ Ուշադրության արժանի են գիտատեխնիկական պրոգրեսի պլանային ղեկավարման կատարելագործման հետ կապված ձեռնարկությունների տնտեսական գործունեության գնահատության ու պլանային ցուցանիշների վերաբերյալ արված դիտողությունները։ Ա. Առաքելյանի տեսական ընդհանրացումներն ու բերված փաստական հարուստ տվյալների վերլուծությունները ստուգության են ենթարկվում զարգացման փորձով, որը հնարավորություն է տալիս տնտեսական երևույթների ընդհանուր համակարգում հայտարերել նոր նշանակություններ։

Սոցիալիստական ընդլայնված վերարտադրության կարևորագույն էլեմենտներից է աշխատուժի վերարտադրությունը, որպես հասարակական զարգացման առաջնակարգ գործոններից մեկը։ Վ. Խոշաբեկյանը, բացահայտելով բնակչության ու աշխատուժի վերարտադրության ու սոցիալիստական վերարտադրության տեմպերի միջև գոյություն ունեցող բազմակողմանի կապը, որի հիմքում ընկած են ինչպես դեմոգրաֆիական, այնպես էլ սոցիալական բնույթի գործոններ, հանդում է ազգաբնակչության սոցիալ-տնտեսական օրենքից բխող այն պրակտիկ եզրակացությանը, որ «հասարակական արտադրության մեջ աշխատողների մեծացումը, որը նպատակ ունի տնտեսական շրջանի բնակչությանը ապահովելու լրիվ և ռացիոնալ զբաղվածությամբ, պետք է համապատասխանի աշխատանքային ռեսուրսների հնարավոր աղբյուրների համալրման և դրանց պրոֆեսիոնալ-որակական կազմին ներկայացվող պահանջներին» (էջ 53)։ Տնտեսագետը բացահայտում է ոչ միայն աշխատուժի վերարտադրության ժամանակակից առանձնահատկությունները, այլ նաև նրա ապագա միտումները, որը կարևոր նշանակություն ունի մինչև 2000 թվականն ընկած ժամանակամիջոցում մեր հանրապետության տնտեսական ու սոցիալական զարգացման կոնկրետ խնդիրների լուծման համար։ Աշխատանքի հասարակական բաժանումը խախտում է ժողովրդական տնտեսության տարբեր ոլորտների միջև աշխատուժի բաշխման «տրադիցիոն» համամասնությունները։ Ցույց տալով այն տեղաշարժերը, որ կատարվել են այդ ասպարեզում հանրապետության մեջ սկսած 60-ական թվականներից։ Վ. Խոշաբեկյանը աշխատանքային ռեսուրսների «ռացիոնալ օգտագործումը» պայմանավորում է մի կողմից արդյունաբերության ու գյուղատնտեսության «ճյուղային կատարելագործման», մյուս կողմից նրա «տերիտորիալ բաշխման» հետագա բարելավման հետ, որոնք հնարավորություն կտան վերացնելու այն հակասությունը, որ գոյություն ունի մի շարք գյուղական շրջաններում բնակչության միգրացիայի «բացասական սալդոյի» և քաղաքներում «դրական սալդոյի» բնագավառում։ Վ. Խոշաբեկյանի վերոհիշյալ հարցերի վերլուծությունները կարևոր նշանակություն են ստանում հանրապետությունում կատարվող դեմոգրաֆիական պրոցեսների ճանաչողական ու իմացաբանական տեսակետից։

Ընդհանրապես արդի գիտության զարգացմանը առավել բնորոշ են դառնում կոլեկտիվ հետազոտությունները։ Դա հնարավորություն է տալիս այս կամ այն պրոբլեմը ենթարկել կոմպլեքսային վերլուծության և երևույթի հետազոտությունն իրականացնել հնարավորին չափ համակողմանի՝ ու մտավոր լայն շառավիղներով։ Վերարտադրությունը հենց այն տարողունակ պրոբլեմներից է, որն իր միասնության մեջ տրոհվում է առանձին մասերի, որոնցից յուրաքանչյուրն ունի հետազոտական իր ոլորտը։ Այս առումով ուշագրավ են բնական ռեսուրսների վերարտադրությանը նվիրված Ռ. Իսախանովի և Բ. Սելվինազյանի հետազոտությունները։ Անցել են նշված խնդիրը հասարակական զարգացման հանդեպ «ինվարիանտ» գործոն դիտելու մտայնության ժամանակները։ Ահա թե ինչու հեղինակները, ելնելով սոցիալիզմի տնտեսական օրենքների հաշվառման փաստից, «էկոնոմիկա—բնական ռեսուրսներ—շրջակա միջավայր» եռանկյան կապերի կարգավորման հարցում կարևոր տեղ են հատկացնում ապրանքադրամական հարաբերությունների ու արժեքի օրենքի լծակների օգտագործմանը։

Գրքում քննարկվում են նաև վերարտադրության այլ պրոբլեմներ։ Մասնավորապես, եթե Ռ. Միրզոյանը, անդրադառնալով շրջանառության ոլորտում տնտեսական մեխանիզմի առանձնահատկություններին, միաժամանակ որոշարկում է «տնտեսական մեխանիզմ» հասկացության իմաստային, ֆունկցիոնալ նշանակության սահմանները, ապա Յու. Սուվարյանը մեթոդոլոգիական նոր սկզբունքներ է առաջադրում աշխատանքի արտադրողականության պլանավորման հետագա կատարելագործման ուղղությամբ։

Ինչ խոսք, գրախոսվող աշխատության շրջանակներում հնարավոր չէր քննության ենթարկել վերարտադրության պրոցեսներն ընդգրկող բոլոր պրոբլեմները և չի կարելի ասել, թե նրանում առաջադրված բոլոր դրույթներն են անառարկելի, որոնց շուրջ կարելի էր նաև կարծիքներ փոխանակել։ Սակայն էականն այլ է. հրապարակի վրա է մասնագիտական խորությամբ գրված մի հետազոտություն, որը ելնում է կյանքի իրական պահանջներից և արծարծված հարցերի լուսաբանումներով համահնչուն է ՍՄԿԿ XXVII համագումարի առաջադրած հասարակաշինության մեթոդոլոգիական ուղեցույցների հետ։

ՌՈԲԵՐՏ ՍԱՐԻՆՅԱՆ
Տնտեսագիտության դոկտոր